ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՀՈՍՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

20.05.2016 15:18

ՀՀ փաստաբանական դպրոցը **2016 թվականի մայիսի 23-ից հունիսի 10-ը ներառյալ** հայտարարում է 2016 թվականի աշնանային հոսքի ընդունելություն՝ քրեաիրավական և քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածությամբ առկա (ստացիոնար), ինչպես նաև հեռավար (դիստանցիոն, առցանց) եղանակով ուսուցման համար։

Դիմումներն ընդունվում են երկուշաբթի-ուրբաթ՝ աշխատանքային ժամերին՝ բացառությամբ շաբաթ և կիրակի օրերի։

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 606-609, (098) 655-601, (055) 320-052 կամ (096) 200-625 հեռախոսահամարներով, գրել anahit.ayvazyan@advschool.am էլ. հասցեին, այցելել www.advocates.am կայքէջ կամ ՀՀ *փաստաբանական դպրոց (հասցեն՝ ք. Երևան, Զաքիյան 2, 3-րդ հարկ)։*

1. ՀՀ փաստաբանական դպրոցի կանոնադրությունը, 2. ՀՀ փաստաբանական դպրոցի վարչական տարածքում տեսանկարահանում և տեսաձայնագրում իրականացնելու կարգը, 3. ընդունելության քննության կարգը, 4. ընդունելության քննության գործընթացի ժամանակացույցը, 5. դիմումի և 6. ինքնակենսագրական տվյալներ պարունակող թերթիկի ձևերը տեղադրված են ստորև՝ www.advocates.am կայքէջում։

Ընդունելության քննության մասնակցության վճարը **ընդհանուր դիմորդների համար** կազմում է 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ, իսկ փաստաթղթերի ստուգման վճարը **հատուկ դիմորդների** համար կազմում է 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ։

Գումարն անհրաժեշտ է փոխանցել հետևյալ հաշվեհամարին՝

ԲԱՆԿ ԵՎ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐ՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ-ԲԱՆԿ» ՓԲԸ, 220303350262000
ՍՏԱՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամ

ՆՊԱՏԱԿԸ՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ընդունելության քննության մասնակցության վճար,

ՀԱՏՈՒԿ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ փաստաթղթերի ստուգման վճար

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կառավարման խորհուրդը սահմանել է.

1. Առկա (ստացիոնար) եղանակով ուսուցում անցնող ունկնդիրների քանակական կազմը՝ 65 (վաթսունհինգ), որից՝

1) քրեաիրավական ուղղվածության՝ 21 (քսանմեկ), որից՝ 20 (քսան) վճարովի, 1 (մեկ)

անվճար տեղ,

2) քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության՝ 44 (քառասունչորս), որից՝ 42 (քառասուներկու) վճարովի, 2 (երկու) անվճար տեղ։

2. Հեռավար (առցանց, դիստանցիոն) եղանակով ուսուցում անցնող ունկնդիրների քանակական կազմը՝ 15 (տասնհինգ), որից՝

1) քրեաիրավական ուղղվածության՝ 5 (հինգ) վճարովի տեղ,

2) քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության՝ 10 (տասը) վճարովի տեղ։

3. Հեռավար (առցանց, դիստանցիոն) եղանակով ուսուցում անցնող ԼՂՀ ունկնդիրների քանակական կազմը՝ 10 (տասը), որից՝

1) քրեաիրավական ուղղվածության՝ 4 (չորս), որից՝ 2 (երկու) վճարովի, 2 (երկու) անվճար տեղ,

2) քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության՝ 6 (վեց), որից՝ 4 (չորս) վճարովի, 2 (երկու) անվճար տեղ։

4.Հատուկ դիմորդների քանակական կազմը սահմանել 24 (քսանչորս), որից՝

1) դատախազի առնվազն 10 (տասը) տարվա ստաժ ունեցողների համար՝ 4 (չորս),

2) փաստաբանի առնվազն 10 (տասը) տարվա ստաժ ունեցողների համար՝ 4 (չորս),

3) դատավորի առնվազն 10 (տասը) տարվա ստաժ ունեցողների համար՝ 4 (չորս),

4) իրավաբանական գիտությունների թեկնածուի, իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցողների համար՝ 12 (տասներկու):

5. Հեռավար (առցանց, դիստանցիոն) եղանակով ուսուցում անցնող ԼՂՀ ունկնդիրներն ազատված են ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննության մասնակցության վճարից՝ 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամից։

6. Ընդունելության քննության անցողիկ շեմը՝ 100 (մեկ հարյուր) միավոր։

7. Ունկնդիրների ուսման վարձի չափը՝

1) **ընդհանուր ընթացակարգով ուսուցման դեպքում՝** 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,

2) **պարզեցված ընթացակարգով ուսուցման դեպքում՝** 450.000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

3) **պարզեցված ընթացակարգով հատուկ դիմորդի ծրագրով ուսուցման դեպքում՝** 450.000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ։

8. ԼՂՀ ունկնդիրների ուսման վարձի չափը՝

1) **ընդհանուր կարգով ուսուցման դեպքում՝** 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

2) **պարզեցված կարգով ուսուցման դեպքում՝** 225.000 (երկու հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ։

9. Հայաստանի Հանրապետության կամ ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների ընթացքում վիրավորված անձնաց խորհրդի որոշմամբ կարող է տրվել արտոնություն՝ ուսման վարձի մինչև 100 տոկոսի չափով, որի վերաբերյալ պետք է ներկայացվեն համապատասխան փաստաթղթեր։

Բեռնել դիմումի ձևը

Բեռնել ինքնակենսագրական թերթիկի ձևը

Բեռնել ժամանակացույցը

Բեռնել կանոնադրությունը

Բեռնել ընդունելության կարգը

Բեռնել տեսանկարահանման կարգը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })